— Դու լաւ տղայ կը դառնաս, — ասաց բեկը, — ես քեզ իմ որդիների մէջ կը պահեմ եւ կը սովորես քաջ լինել:

Մտքումս ասեցի, եթէ քաջութիւնը աւազակութեան մէջն է, ես երբեք նպատակ չունեմ այդ սովորելու:

— Ես այնքան երկչոտ չեմ, որքան դուք կարծում էք, բէկ, — պատասխանեցի լսելի ձայնով:

— Այդ մենք կարող ենք փորձել, — ասաց նա, — եւ փորձելու առիթ կայ. քո ձին, որ Մըհեն յանձնել է մի հովի, նա ռաւանդների ցեղին է պատկանում. թշոառականը, որպէս խոստացել էր, դեռ չէ վերադարձրել ձին: Երեւի պահելու միտք ունի: Ռաւանդների երամակները մեզանից ոչ այնքան հեռու մի սարի ետեւում արածում են: Եթէ քեզանում սիրտ կայ, այս րոպէիս կը գնաս եւ նրանց ձիերից մի քանի հատ կը բերես: Էգուց նրանք ստիպուած կը լինեն քո ձին բերել եւ իրանցը տանել:

Ես զարմացայ բէկի մի այսպիսի առաջարկութեան վրայ եւ պատասխանեցի.

— Դիցուք թէ մի խաբեբայ հովիւ, օգուտ քաղելով Մըհէի միամտութիւնից, իմ ձին տարաւ եւ ետ դարձնելու նպատակ չունի. բայց ես ի՞նչ իրաւունք ունեմ ուրիշի ձին բերել նրա փոխարէն:

Բեկը պատասխանեց.

— Հիմա երեւաց, որ դու ոչ միայն երկչոտ ես, այլ աշխարհի կարգն էլ չես իմանում:

Ես կարծում էի, թէ բեկն այս բոլորը կատակի համար էր խօսում, բայց երբ Ասլանը պատմեց մի քանի բաներ քրդերի կեանքից, այն ժամանակ ես համոզուեցայ, որ նա կատակ չէր անում: Քրդերի մէջ օրէնքի զօրութիւն էր ստացել այն սովորութիւնը, երբ մի առանձին ցեղի պատկանող մարդ յափշտակում է որեւիցէ ուրիշ ցեղի հասարակութեանը պատկանող մի մարդու սեփականութիւնը, վերջինը իրաւունք ունի իր կորուստի փոխարէնը յափշտակել աւազակի ցեղին պատկանող մի օտար մարդու կայքից, թէեւ նա ամենեւին խառն չէ եղել յիշեալ գողութեան գործի մէջ: — Այստեղից առաջ են գալիս այն անընդհատ յափշտակութիւնները, որ կատարւում են տարբեր ցեղերի մէջ եւ պատճառ են տալիս նրանց մշտական կռիւներին: Վրէժխնդրութեան մի այսպիսի ձեւը շարժական կայքից անցնում է անձինքների վրայ: Մի ցեղին պատկանող մարդ իր սպանուած ազգակցի արեան փոխարէն կարող է սպանել մի ուրիշ մարդու հակառակ ցեղից, թէեւ նա բոլորովին անմեղ լինէր: — Դա ծագում է այն սկզբունքից, որ ցեղը քրդերի մէջ մի ամ-